

ԵՐԵՒԵԱԼ – ԵՐԵՒԵԼ ԴԱՇՏԻ ՏԵՂԸ

Բուզանդարանն ասում է. «Ապա զոր արարեալ Մանուէլ հանդերձ արչակունի տիկնաւն, եւ մանկամբքն երկօրումբ՝ Արչակուն եւ Վաղարչակուն, հանդերձ ամենայն բանական Հայոց մեծամեծ աւանդանուոյն նախարարօքն երեւեալ հասանէր ի գաւառն Կարնոյ եւ ամենայն տանուտեարք ընդ նմա: Եւ տայր սպարապետն Մանուէլ զդուստր իւր Վարդանդուխտ կինն Արչակայ մանկանն արչակունուոյ, եւ փեսայ իւր առնէր զնա: Առնէր հարսանիս եւ եղբօր նորին Վաղարչակայ, եւ տայր նմա զդուստր ասպետին [Սահակայ, Խորենացի, Գ., խա, խգ.] Բագրատունուոյ ի Սպեր գաւառէ . . . եւ մեծապես արարեալ զհարսանիսն ամենայն երկիրն Հայոց» (Բուզ. Ե, խդ. 263 – 264, Վենետիկ, 1889):

Վերեւի ընդդժուած «երեւեալ»ը ուղղում ենք «յերեւեալ»։ ի նկատի առնելով եւ Բուզանդարանի մի երկրորդ վկայութիւնը. «Ապա զայր սպարապետն Վասակ դտանէր զառաջին առաջն զօրաց Պարսից . . . , զի հասեալ էին ի գաւառն Վանանդայ, ի տեղւոջն՝ որ անուանեալ կոչէր յերեւեալ» (Բուզ. Դ. երես 142): Անտարակոյս այս վերջինս պիտի լինի «երեւեալ», ուրեմն առանց յ նախորդի, ինչպէս որ ունի հրատարակութեանս մի տարբերակը, մանաւանդ որ այս «տեղին» — հաւանօքէն դիւղ կամ աւան — յիշում է եւ Մ. Խորենացին հէնց Արչակ Գ.ի ժամանակ. «Ժողովեալ Արչակայ զզօրս իւր՝ խաղայ ի վերայ Խորսովայ: Գնաց եւ Խորսով ի բանակէն իւրմէ առ

ծովուն Գեղամայ, զոր Մուրան կոչեն ընդ առաջ Արչակայ, զի մի ի սահմանս իւր իջցէ. եւ ոչ այնչափ ատակեաց աճապարել՝ մինչեւ եգիտ զԱրչակ իջեալ յիւր սահմանն, ի գաւառին Վանանդայ: Եւ պատահէին միմեանց ի դաշտին որ կոչի Երեւել» (Խոր. Գ. խգ. 236, Վենետիկ, 1865):

Արդ այս Երեւեալ — Երեւելն ըստ Խորենացու, ինչպէս եւ ըստ Բուզանդարանի մեր մէջ բերած վերջին վկայութեան՝ Վանանդ գաւառումն էր, մինչդեռ ըստ առաջին վկայութեան, որի «երեւեալ»ը անշուշտ «Երեւեալ»ն է, կարծես թէ Կարնոյ գաւառումն է լինելու: Բուզանդարանի այս անորոշութիւնը կը վերանայ երբ մենք ուղղադրենք. «Ապա . . . զոր արարեալ . . . Մանուէլ . . . յերեւեալ՝ հասանէր ի գաւառն Կարնոյ», այսինքն՝ Մանուէլը զօրք ժողովելով Երեւեալ — Երեւել դաշտը, զնաց հասաւ Կարնոյ գաւառը, որով կարող էր արդարեւ հարսանիքը տեղի ունենալ Կարին քաղաքում, ինչպէս կարծում է Գարագաշեանը (Քննակ. Պատմ. Հայ. Գ. հատ. Ա. դ. § 23, էջ 180, Թիֆլիս, 1895):

Բարթոլոմէոս Էպիսկոպոս Գէորգեան — Ճուղուրեանցը, առաջ բերելով Խորենացու վերոյիշեալ վկայութիւնը, ասում է. «Այս հատուածի մէջ «ի գաւառէն Վանանդայ», ապա եւ «ի դաշտին որ կոչի Երեւել» բառերը կարծում եմ յետոյ յաւելացրուած, որովհետեւ պատահել են միմեանց եւ պատերազմել ոչ թէ Վանանդում, այլ Գեղամայ ծովի մօտ, ինչպէս պատ-

մում է [Էջմիածնի] 1) թիւ 1669 ձեռագիրը 2) այլ եւ Թովմայ Արծրունին, ի հարկէ ժամանակին իւր ձեռքում ունեցած Խորենացու պատմութիւնից առնելով. «Եղեալ պատերազմ մեծ Արշակայ եւ Խոսրովու յեղերս [բնագրում «յեղը»] Մովսէս Գեղամայ՝ ի մօրին տեղում»։ (Պատմ. Տաճն Արծրուն. Ա. ծա. 69, Ս. Պետերբուրգ, 1887)։

«Կամ թերեւս Խորենացու նախօրինակում վաճառողայ բառի տեղ վարածնունիք եղած լինէր, կամ մի ժամանակ Գեղամայ արեւմտեան ծովեղերքը վաճառող են հասկացել։ «Ի մօրին տեղում» նշանակում է տղմոս — նմանայ տեղում. այդպիսի տեղեր են յիշեալ ծովակի արեւմտեան կողմերը, թէ՛ դէպ արեւմտեան — հիւսիս Չիրուխու գիւղի առաջի դաշտը, եւ թէ՛ արեւմտեան—հարաւ Ելենուփկա եւ Օրդակլու գիւղերի սահմանները։ Այս գիւղի հարաւային կողքի բլրին, ինչպէս լսեցի (այդ գիւղում եւ Սեւանում երկար տարիներ ապրող մէկից, եւ այժմ անուանում են «Մուրսի սար» (լեռ))։

Այնուհետեւ Բարթուղիմէոս եպ. յայտնում է. «Ձեռագիր թիւ 1669ին եւ Թովմայի վկայութեան պատահելուց առաջ՝ Խորենացու հատուածի «որ կոչի Երեւել»ը համարում էի յետին ժամանակի բարեպաշտական յաւելում, որովհետեւ իսկոյն յիշեցի ... Սեւանի մի ձեռագրի Յայտաւուրբից «Վարդ եւ պատմութիւն Գօշին Միսիթարայ» (Մեսրոփ արք. Սմբատեանց, Գեղարքունի ծովապարզ գաւառ, 381 — 386. Վաղարշապատ, (1895). որից իմանում ենք թէ Գօշ Միսիթարին (ԺԲ. դար) ձապոտիկ (Չիրուխու) գիւղի առաջի ծովեղերայ դաշտի վերայ Քրիստոս եւ Աստուածածին Մարիամ երեւել են ...» Բարթուղիմէոս եպ. նստուկել է, որ այդ տեսիլքի աւանդութիւնն ունին բոլոր չրճակայ գիւղերն եւ Սեւանի միաբանութիւնը, եւ որ «Տեսիլքի տեղում հնուց ...

կայ մի մատուռ, ուր... ուխտադնացութիւն է լինում...», որ եւ «կոչում է Աստուածընկալ»։ Եւ ահա եզրափակում է. «Այս աւանդութիւնը ստեղծելուց, ուրեմն եւ Գօշ Միսիթարից յետոյ այդ դաշտը կոչուել է «Երեւել» եւ իբրեւ յայտարար (տեսիլքի)՝ մոծուել է Խորենացու հատուածի մէջ, որից եւ անցել է Բուզանդի մէջ կամ քնդհակառակը»։

Վերջին երկու ընդգծուած բառերին տեղիք է տուել Բուզանդարանի Դ. ք. 142 վկայութիւնը, որ Եպս. ք. ծանօթագրութեամբ առաջ է բերում (Բարթուղիմէոս Վ. Գէորգեան — Ճուղութեանց, Խորենացիին Խորենացու պէտք է հասկանալ, Ա. հատ., § 14, 93 — 96, Վաղարշապատ, 1899)։

Առաջին փաստերը՝ «ի դաւառին Վանանդայ» եւ «ի դաշտին որ կոչի Երեւել» յաւելում համարելու Խորենացու մէջ, որովհետեւ իբրեւ թէ կոտորներն՝ Արշակ եւ Խոսրով թագաւորը՝ «պատահել են միմեանց ոչ թէ Վանանդում, այլ Գեղամայ Մովսի մօտ», անհիմն են եւ Խորենացուն չհասկանալու արդիւնք. նախ որ ձեռագիր 1669ի տարբերութիւնը տպագիր եւ այլ ձեռագիր օրինակներից միմիայն այն է, որ ունի «մօրսն» փոխանակ «Մուրսի», ուրեմն միայն մի բառ. իսկ մնացեալները միեւնոյնն են. ապա պէտք է ասել, որ Թ. Արծրունին նոյնպէս չի հասկացել Խորենացու քնագիրը, ճիշդ ինչպէս դարեր յետոյ Վիկտոր Լանդլուան, որոնք երկուսն էլ Խորենացու միեւնոյն քնագիրն են ունեցել։ Վերջինս թարգմանում է՝ *Arsace, à la tête de ses troupes, marche contre Chosroës. Chosroës partit de son camp et se dirigea [?!?] vers la mer de Kégham, appelée [?!?] Mours, à la rencontre d'Arsace, pour l'empêcher d'entrer sur son territoire (Collection des Historiens Anciens et Modernes de l'Arménie, II. 157).*

Լանդլուայի մեր ընդգծած բառերը թարգմանութիւնն են Խորենացու մեր մէջ բերած հատուածի հետեւեալ նախադասութեան. «Գնաց եւ Խոսրով ի բանակէն իւրմէ առ ծովուն Գեղամայ, զոր Մուրսն կոչեն», որ պարզապէս նշանակում է. «Խոսրովն էլ դնաց — մեկնեց Գեղամայ ծովափին դառնալով իւր բանակից — բանակատեղից, որ Մուրս են կոչում»։ Մինչդեռ Լանդլուան ոչ միայն հակառակն է

1) [] Քառակուսի փակագծերի մէջ առնուածները մերն են։ Ս. Կանայեանց

2) Ս. Էջմիածնի մատենադարանի թիւ 1669 ձեռագիրն ունի «Գնաց ... առ եզր ծովուն Գեղամայ, զոր մօրսն կոչեն». եւ թիւ 1665ր ուի. «զոր մուրսն կոչեն»։ Վերջինս է հին եւ ուղիղ ընթերցումը, որը սխալմամբ կարդացել են «մուրսն»։

թարգմանել, այլ եւ «գոր» յարարերականը փոխանցելով Գեղամայ ծովին, Մուրսը համարում է նոյն ծովի անուն, որ անուր է, անծանօթ հայ ու օտար յոյն-հռոմէական հեղինակներին: Բարեբաղդարար հէնց Բարթուղիմէոս եպոսից իմանում ենք, որ Մուրսը մի լեռ է Գեղամայ ծովափին, որտեղ հաւանօրէն ամառը դառնում էր խորովի բանակը: Լանդլուան այս թարգմանութիւնն արել է խորենացու տպագիր օրինակից եւ ինչպէս նրա սխալից չի հետեւի, որ տպագիրներն էլ այդպէս են, այնպէս էլ թ. Արծրունուց չի կարելի եզրակացնել, որ ուրեմն նրա ձեռքի տակ եղած խորենացու բնագրում էլ այնպէս էր, ինչպէս Արծրունի է հասկացել եւ գրել: Ճիշդ է թարգմանել Մ. Էմինը ուսերէն, որին եւ յարեւման է խորէն Ստեփանէի աշխարհաբար թարգմանութիւնը, որ մենք մէջ ենք բերում. «Արշակն Ի զօրքս ժողովելով զնաց խորովի վրայ: խորովն եւս զնաց Արշակի զէմ իր Մուրս կոչված բանակից, որը Գեղամի ծովի մօտ էր, որպէսզի Արշակն իր Սահմանները շփոնէ. բայց չտապելով չկարողացաւ ժամանակին հասնել, այնպէս որ Արշակին իր սահմանը մտած գտաւ, Վանանդի դաւառում: Նոքա պատահեցին միմեանց, սատակ կոխ տուին»: (Մ. խորենացու Հայ. Պատմ. Գ. Խ2. 276. Ս. Պրուրգ, 1897):

Կարելի էր այժմ համարձակ ասել որ Բարթուղիմէոս եպոսի միւս բոլոր «կամ-կամ»երը, «թերեւս»ները, ենթադրութիւնները օղից առնուած, անհիմն ու քմահաճոյ կարծիքներ են, մանաւանդ եթէ ի նկատի առնենք, որ Ներսէս Լամբրոնացու «նախադադար» օրինակից արտագրուած խորենացու ձեռագիրն ունի այն բոլորը (1), ինչ որ Բարթուղիմէոս եպոս.ը յա-

1) Լամբրոնացու ձեռագիր խորենացու մասին տես Մ. խորենացու Պատմ. Հայ., աշխատութիւն Մ. Արեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, ծախսիւք տն. Սիւփիասայ արքեպս. Պարգեան, Տփղիս, Արագատիպ Մնացական Մարտիրոսեան, 1903, էջ 5. Բ.: Հմմտ. եւ խորէն եպոս. Ստեփանէ Մ. խորենացու Հայ. Պատմութ., Ս. Պրուրգ, Յ. Լիբերմանի տպարան, 1897, էջ 49 - 46, դէ: Կարծեմ Ստեփանէն շփոքում է, եւ նրա էջ 49-ի «1123» է Արեղեանի եւ Յարութիւնեանի խմբագրութեան էջ Բ-ի ՌՃԳ = 1143 + 551 = 1694:

ւելուածներ է համարում. իսկ Լամբրոնացու օրինակը յամենայն դէպս ԺԲ. դարուց առաջ էր: Բայց եւ այնպէս մենք ստիպուած ենք սակաւ ինչ երկարացնելու Բարթուղիմէոս եպոս.ի կարծիքների քննութիւնը, մանաւանդ որ՝ չնայելով որ ըստ մեր հմուտ երկու աշխարհագիրների՝ Ինճիճեանի (Ստորագր. Հին Հայաստանի, 437) եւ Ալիշանի (Այրարատ, § 51, էջ 752, § 58, էջ 891) Երեւելու - Երեւելը Այրարատ նահանգի Վանանդ դաւառումն է, Ս. Էմինը իրականը, երեւի ազդուելով մեր եպիսկոպոսից, տատանում է ասելով. «Այրարատայ Վանանդ դաւառի մէջ կը կարծուի լինել» (Բնաշխարհիկ Բառարան, Ա. 677, Վենետիկ, 1902):

Մենք մի կողմ ենք թողնում Բարթուղիմէոսի այլ «բարեպաշտական յաւելուածները», որ մեր խնդրին չեն վերաբերում, եւ առնում միայն Երեւել դաշտին: Միւթար Գօշի տեսիլքի պատմութեան մէջ մենք չգտանք անգամ երեւել բառը, իսկ մատուռի Աստուածընկալ անունը ցոյց է տալիս, թէ ինչն է շեշտուած: Եւ եթէ մի վայրկեան անգամ ընդունենք եպոս.ի ենթադրութիւնը, հարց է առաջանում, թէ տեսիլքը դուռ տեղական նշանակութիւն ունենալով, ի՞նչպէս կարող էր ազդել Մեծ Հայքում, Փոքր Ասիայում, Կիլիկիայում կամ այլուրեք գտնուած արտագրողների վրայ, որոնք բոլորն էլ թէ՛ խորենացու եւ թէ՛ Բուզանդարանի ձեռագրերում մտցնէին Երեւելու - Երեւելը, այնպէս որ ցարդ մնացած չլինէր բազմաթիւ ձեռագրերից եւ ոչ մէկը, որ այդ շունենար. այնպէս որ կարելի է պնդել թէ բնաւ հաւանական չէ եւ հնարաւորութեան սահմանից դուրս է: Այս կարելի է ասել մանաւանդ խորենացու Արեղեանի եւ Յարութիւնեանի Էմինեանի հրատարակութիւնից յետոյ, որ եղել է բազմաթիւ ձեռագրերի համեմատութեամբ: Եւ եթէ Բուզանդարանի Ե, խդ, 263, տող 24 «Երեւելու» մենք առաջին անգամ ուղղում ենք «Երեւելու», իսկ Մկրտիչ Էմինի պէս հայագէտը չի թարգմանել (Victor Langlois, Collection, I, 305, անշուշտ իբրեւ աւելորդ, անիմաստ, մեր մեծ մասամբ անգէտ գրիչները պիտի կարողանային այդ ներմուծել: Միեւնոյն հիմքերով խաղառ անընդունելի է որ իբրեւ թէ «խորենացու նախօրինակում Վանանդայ տեղ վարած-

նունիք եղած լինէր»։ Գայով այն խաղաղ ձրի ենթադրութեան «կամ մի ժամանակ Գեղամայ արեւմտեան ծովեզերքը Վանանդ են հասկացել», հարցնում ենք՝ ո՞վ են. յամենայն դէպս Բուզանդարանն ու Խորենացին չեն։ Վերջինս զոնեա չատ լաւ գիտէ Վանանդի տեղը. եթէ մի կողմ թողնենք նրան վերադրուած Աշխարհացոյցը, իւր Հայոց Պատմութեան մէջ (Բ. Գ. 109, Տփղիս, 1913) Վաղարշակի մասին գրում է. «Եւ ինքն ... իջանէ ի տեղիս խոտաւէտս մերձ ի սահմանն Շարայի, զոր հինքն Անիայտ եւ Վերին Բասեան կոչէին. իսկ յետոյ՝ փասն հատուածի Վղրնդուր Բուզարայ Վնդայ, բնակելոյ ի տեղիսն՝ յանուն նորա անուանուեցաւ Վանանդ»։ Իսկ Բուզանդարանի (Ե, Խդ., 263) մեր առաջ բերած ընդարձակ վկայութեան «Զոր արարեալ ... երեւեալ [= յերեւեալ]՝ հասանէր ի գաւառն Կարնոյ» եւ միւս վկայութեան (Բուզ. Գ. իբ. 142) «Զի հասեալ էին ի գաւառն Վանանդայ, ի տեղւոյն ... յերեւեալ [= Երեւեալ] խօսքերը ցոյց են տալիս, որ նա էլ Վանանդի տեղը հասկացել է ճիշդ Խորենացու պէս Անիայտ կամ Վերին Բասեանը, որ սահմանակից էր Կարնոյ գաւառին, եւ որ զլիաւորն է, ինչպէս Խորենացու վկայութիւնից էլ երեւում «ի սահմանս» - սահմաններում Պարսկա-Հայաստանի Խոսրով Գ. թագաւորի, ուր եւ մտաւ Արշակ Գ. Յունահայաստանի թագաւորը, Կարին գաւառից դալով։

Խորենացու այս հատուածը ճիշդ հասկանալու համար պէտք է աչքի առաջ ունենալ, որ այս պատերազմը պատահել է 384-386 թուականներին, երբ Հայաստանը բաժանուած էր երկուսի, երբ Յունահայաստանում իշխում էր Արշակ Գ. վերջինը։ Այս երկու Հայաստանի սահմանների որոշումն աւելի կը պարզի Երեւեալ - Երեւելի եւ Վանանդի տեղը։ Այս խնդրով զբաղուել է ն. Ազոնցը։ Մենք մի կողմ թողնելով հարաւից հիւսիս ձգուող բովանդակ սահմանագծի որոշումը, մէջ ենք բերում միայն մեր խնդրին վերաբերեալ հիւսիսայինը. «Մարդաղի գաւառի յետեւ, գրում է Ազոնցը, Թէոդոսիոսի [Կարնի] շրջանում եւ աւելի հեռու սահմանագծով Թէոդոսիոսից մինչեւ ձորոխ գետը, Արզրումի [= Կարնի] աջ կողմով դէպի հիւսիս ընթանում են նախ Դավա-Բոյին եւ ապա Կարդարազար լեռները, որոնք

ամբողջ լեռնաշղթայի (10,230 ոտք) մօտ վերջանալիս թեքում են դէպի արեւմուտք եւ միանում են Դումլի շղթայի հետ։ Դումլին ձգւում է Արզրումից վերեւ ուղղուելով աւելի հեռու դէպի ձորոխի եզերքը Սպերից բարձր։ Վերոյիշեալ գծին Պարսից կողմից սահմանակից էր Բասեանը, եւ Տայքի Բուխա եւ Ոքաղ գաւառները, որոնք գտնուում էին Հռովմէական Կարնի եւ Շաղաղոմի հանդէպ։ Բուն սահմանի վրայ, Թէոդոսիոսին դէմ առ դէմ, ընկած էր Դու գիւղը, որը միաժամանակ Կարնի եւ Բասեանի սահմանն էր» (Արմենիա, Գլ. Ա. 22/3. Ս. Պետերբուրգ, 1908)։ Բասենի եւ Դուի վերաբերմամբ Ազոնցի ապացոյցներն են. «Եւ էր բանակ սաստկութեան զօրուն Արեաց ի գեօղն որ անուանի Դու, ի սահմանակցութեան Պարսից եւ Հռոմոնց» (Ղ. Փարսեցի, Գ. հր. 136, Տփղիս, 1904) եւ «Գայ ի գլուխ Բասեանոյ, մերձ ի գեօղն որ կոչի «Դու» (Ա. Լատիվերացի, Պատմ. Ժ. 2. 67. Վենետիկ, 1844)։ Այս վկայութեանց վրայ կարելի էր աւելցնել եւս. «Չուեալ յՈքաղայ՝ իջանէր ի գաւառն Բասեան եւ բանակէր մօտ ի գեօղն, որ անունի Դու, ի գաւառն Արզերականց, զոր Արծաթադրերան կոչեն» (Ղ. Փարս. Գ. 6.)։ Ազոնցն իրաւամբ առաջ բերուած տեղում Արզրումի մօտիկ Կարդարազար լեռների ստորոտում գտնուած Տու գիւղը համարում է հին Դու-ն։ Այս սահմանագիծը տեւեց մինչեւ 591 թուականը, ուստի եւ ինչպէս Մենանդրն է ասում, երբ Խոսրով Նուշիրվանը 547 թուին մտաւ Հայաստան-Պարսկահայաստան, անցաւ Տարօն եւ Բագրեւանդ եւ յառաջ ընթանալով դէպի Բասեան, մտաւ Հռովմէական Հայաստան» (Ազոնց, անդ. 20, 23)։ Այս բոլորի վրայ եթէ աւելացնենք մի աւելորդ անգամ եւ այն փաստը, որ Գեղամայ ծովի արեւմտեան-հիւսիս ծովեզերքը մինչեւ Ճապոտիկ-Զիրուխուի դաշտը Փաղասարար՝ մօրուտ չէ այժմ, ինչպէս Բարթոլոմէոս եպ. ն է ասում, չէր կարող լինել եւ Միթիթարի ժամանակ, քանի որ ըստ տեւիքի վրաններով էր ծածկուած. անտարակոյս այսպէս էր եւ Գ. դարու վերջերին Խոսրով Գ. եւ Արշակ Գ. ի ժամանակ, որովհետեւ զառիթափ տեղ է եւ բոլոր ջրերը ծովն են թափուած, հետեւաբար այստեղ կոխը տեղի չունեցաւ, իսկ Գեղամայ-Սեւանայ ծովի արեւմտեան-հարաւ՝ Երեւովկա եւ Օրդակլու [Խորենացու «Պորտակ»ը] գիւ-

ղերի սահմաններն արդարեւ մօրուտ են. բայց նախ մօրուտ տեղերում չառ հաղուադէպ են լինում կռիւներ, եւ ապա միթէ պարզ չէ որ բոլոր թիւրիմացութեան պատճառը Մուրս բըլուրն է, որ դարձել կամ հասկացուել է «մաւրս» — ճահիճներ:

Այս բոլորից յետոյ ակներեւ է, որ Պարսկահայաստանի թագաւոր Խոսրով Գ.ի բանակը, ամառ ժամանակ գտնուում էր Սեւանայ ծովափին գտնուած Մուրս բլրի մօտ, որտեղից Խոսրովն շտապում է Պարսկահայաստանի հիւսիս-արեւմտեան սահմանը, երբ իմանում է, որ

իւր հակառակորդ Յունահայաստանի թագաւոր Արշակ Գ.ը յարձակւելու է իւր սահմանների վրայ, բայց չնայելով Խոսրովի ահապարանքին, Արշակը մտնում է արդէն Յունահայաստանի Կարին գաւառին սահմանակից Պարսկահայաստանի Անփայտ — Վերին Բասեան — Վանանդ գաւառը, որի երեւեալ — երեւել դաշտում միայն տեղի է ունենում Խոսրով Գ. եւ Արշակ Գ. Պարսկահայաստանի եւ Յունահայաստանի այս ստուեր թագաւորների ճակատամարտը:

ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԵԱՆ

Երեւան, 1925